

Մարտի 14-ին, ժամը 15:00-ին Հայաստանի ազգային գրադարանի կինոդիտման սրահում տեղի կունենա Նարինե Կռոյանի «Դանիելի գիրքը» վեպի շնորհանդեսը:



Նարինե Կռոյանը արձակագիր է և վեց գրքի հեղինակ: Ունի բազմաթիվ գրական մրցանակներ, այդ թվում՝ «Նարդե» ամսագրից (2012թ.), «Արծալ 2013» և «Օրսում գրքի մրցանակ»՝ 2011 և 2013 թթ-ի պատմվածք և վիպակ անվանակարգերի հաղթող: Բնակվում է Չեխովայր Կանաձորում, տեքստագիտության թեկնածու է, դասախոսում է: «Ղակիցը» հեղինակի առաջին վեպն է:

Ներսում ավելի ու ավելի մեծացող դատարկությունը հսկայական մագնիսի նման քաշում, կլանում էր ամեն ինչ, որ դեռ կար, դեռ փորձում էր դիմակայել չգոյությանը: Ատածեց, որ իր նախկին պատկերացումները դժոխքի և դրախտի մասին պարզապես կոմիքսների մանկական գրքերից ինչ-որ գունավոր կամ անգույն պատկերներ էին: Հասկացավ, որ իրականում ոչ ոք, իրենից բացի, չի կարող իր համար դրախտ, իսկ ավելի ստույգ՝ միայն դժոխք արարել՝ մոգոնելով ամենադաժան պատիժներն ու ի կատար անել դրանք: Լինել դահիճ և զոհ միաժամանակ: Ահա և դժոխքը:

Նարինե Կռոյան



ԴԱՆԻԵԼԻ
ԳԻՐՔԸ

